ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ն 255-Ա

„08" Սեպտեմբեր 2023թ.

ք.Արտաշատ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի օգոստոսի 7-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» № 817-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի № 1 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ Արարատի մարզում անտառային և խոտածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:

2. Հաստատել աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մարզի անտառածածկ և խոտածածկ տարածքներում իրականացնել ուսումնասիրություններ և վեր հանել առկա խնդիրները:

4. Աշխատանքային խմբի անդամներին՝ մեկշաբաթյա պարբերականությամբ, յուրաքանչյուր հինգշաբթի ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առկա խնդիրները, դրանց լուծման համար առաջարկվող ուղիները և տեղեկատվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ամփոփել ստացված տեղեկատվությունը և ներկայացնել Արարատի մարզպետին և ՀՀ ՆԳՆ ՓԾ համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին:

7. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

Восстановимая подпись

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

2023թ. Սեպտեմբերի «08»

թիվ 255-Ա որոշման

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Աշխատանքային խմբի ղեկավար՝

1) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության պետ փ/ծ փոխգնդապետ՝ Արսեն Ղուկասյան:

2. Աշխատանքային խմբի անդամներ՝

1) Արարատի մարզպետի խորհրդական՝ Հովհաննես Ավետիսյան,
2) ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ՝ Սարիբեկ Ռուստամյան,
3) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ՝ փ/ծ մայոր Գևորգ Թեմուրյան,
4) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ՝ Հարություն Կարապետյան,
5) Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ՝ Հայկազ Տերտերյան,
6) Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Յուրի Մարտիրոսյան,
7) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Հովհաննես Ուրֆալյան,
8) Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ՝ Մուրադ Միքայելյան,
9) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արարատի տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արա Նազարյան (համաձայնությամբ),
10) ՀՀ բնապահպանության և ընդերքների տեսչության Արարատի տարածքային բաժնի պետ՝ Արթուր Նազարյան (համաձայնությամբ),
11) ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿԻ Արտաշատի օդերևութաբանական կայանի պետ՝ Անահիտ Առաքելյան (համաձայնությամբ),
12) «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ռադիկ Օղիկյան (համաձայնությամբ):

Восстановимая подпись

X

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: MKRTCHYAN ARTUR 3414870525 **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**